Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 21.10.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա. Աթանեսյանի
մասնակցությամբ անդամներ՝ Ա.Դունամալյանի
Պ. Թադևոսյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քաղաքացիական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել են քաղաքացիական դատավարություն բաժնի 7-րդ, 16-րդ, 23-րդ հարցերը:

Քաղաքացիական դատավարություն բաժին

Հարց 7

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածը հնարավորություն է տալիս դատարանին ցանկացած դեպքում իր նախաձեռնությամբ եզրակացությունը պարզաբանելու նպատակով փորձագետին հրավիրել հարցաքննության: Վերոգրյալ իրավանորմն որևէ սահմանափակում չի նախատեսում, իսկ Հավակնորդի կողմից ընտրված տարբերակը չի կարող ճիշտ համարվել, քանի որ ընտրված տարբերակում դատարանի վերոգրյալ իրավասության իրականացումը պայմանավորվել է միայն օրենսգրքով նախատեսված դեպքերով, իսկ օրենսգրքով որևէ նման դեպք առանձին նախատեսված չէ:

Հարց 16

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ինքնաբացարկի կամ բացարկի հարցը լուծում է դատավորը: Եթե գործը քննվում է դատավորների կոլեգիալ կազմով, և բացարկ է հայտնվել դատավորներից մեկին կամ մեկից ավելի դատավորների կամ դատական ամբողջ կազմին, ապա յուրաքանչյուր դատավոր լուծում է իրեն հայտնված բացարկի հարցը: Վերոգրյալ կարգավորումից բխում է, որ ինքնաբացարկի կամ բացարկի հարցերը լուծվում են առանց քվեարկության, հետևաբար Հավակնորդի կողմից ընտրված «գ» տարբերակը որևէ դեպքում չի կարող ճիշտ համարվել:

Created With Tiny Scanner

Հարց 23

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 3-րդ մասը իմպերատիվ կարգով սահմանում է, որ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձի հայցով որպես պատասխանող կարող են հանդես գալ միայն սկզբնական հայցով հայցվորը և (կամ) պատասխանողը:

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 9154 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը մերժել:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.ԱԹԱՆԵՍՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա.ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆ

Պ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Created With Tiny Scanner